

3821.

Ի. ՄԻՆՑ

ՍՈՅԻԱԼԻՇԱԿԱՆ
ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ԽՍՀՄ-ՌԻՄ

9(47), 1917

Մ- 72

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ԳՈՐԾՈՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԹԵՐԵՎԱՆ • 1939

30 JUL 2011

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲՈՂՈՔ ՁԵՐԿՐՈՅԻ, ՄԻԱՅՆ

9(47) 1817

հ. ՍԻՆ 8

5772

24 JAN 2006

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ԽՍՀՄ-ՈՒՄ

1355

1355

ԳԵՏՎԱՐԱՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

1917 թվի հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին) Ռուսաստանում կատարվեց Սոցիալիստական մեծ հեղափոխություն։ Բանվորներն ու ամենաչքավոր գյուղացիները տապալեցին կալվածտերերի և բուրժուազիայի իշխանությունը և հաստատեցին Խորհուրդների իշխանություն։

Հին Ռուսաստանում ֆարբիկաները, գործարանները, հանքերն ու հանքահորերը, յերկաթուղիներն ու շողենավերը պատկանում ենին կապիտալիստներին։ Միինավոր բանվորներ աշխատում ենին հարուստների համար, իրենք մնալով աղքատներ։ Գործարանատերերի պահեստները տրամադրում ենին ապրանքների առաջնային հարաբեկությունը, իսկ նրանք, ովքեր ստեղծել ենին այդ հարստությունը, դատապարտված ենին քաղցածության։ Գործադրկությունն սպառնում եր բանվորներին՝ նրանց ամբողջ կյանքում։

Հողը պատկանում եր կալվածատերերին։ 30 հազար կալվածատերեր ավելի քան 60 միլիոն հեկտար հող ունենին։ Մեկ կալվածատեր միջին հաշվով այնքան հող ուներ, վորքան ունենին յերեք հարյուր գյուղացիական տնտեսություններ։ Սակավահողությունն ու չափից գուրս հարկերը խեղում ենին աշխատավոր գյուղացիությանը։

Հին Ռուսաստանը ժողովուրդների բանտ եր։ Ամբողջ բնակչության կեսից ավելին կազմում ենին ճնշված աղդությունները։ Յարական իշխանությունն անարդում եր այդ ժողովուրդների լեզուն ու սովորությունները, արգելում եր դպրոցներում յերեխաներին մայրենի լեզվով սովորեցնելը։ Զինովիեկ-հարստահարիչներն Ուկրաինային արհամարհանքով «Մալուսուխա» եյլին անվանում, իսկ բոլոր գոչուսներին—«այլապղիներ»։ Յարիզը մի ազգությունը մյուսի դեմ եր գրգռում՝ խանդարելու համար տարեր ազգությունների աշխատավորների միացումը՝ ինքնակալության դեմ մղվող պայքարում։

Գյուղացիները շատ անգամ են ապստամբել ցարի ու կալվածատերերի դեմ։ Ժամանակ առ ժամանակ ժողովրդական ապօռամբության ալիքները մինչև իսկ գահն են հասել, ցնցելով ամբողջ կալվածատիրական պետությունը։ Այդպես յեղալ այն



1246
39

И. МИНЦ
ВЕЛИКАЯ
СОЦИАЛИСТИЧЕСКАЯ
РЕВОЛЮЦИЯ В СССР

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

պըստամբությունների ժամանակ, վարոնք ղեկավարում ելին Սու-
խան Ռազմիկ, Յեմելյան Պուգաչևը: Բայց գյուղացիների յելույթ-
ները տարերային ու անկազմակերպ ելին: Միայն պրոլետարիատի
ու նրա կուսակցության—բոլշևիկների կուսակցության հանդես
գալով ժողովուրդների ապստամբությունները վերածվեցին հին
կարգերի գեմ մզվող կազմակերպված պայքարի:

Բոլշևիկների ղեկավարությամբ ժողովրդական մասսաները
կրոհեցին ցարիզմի վրա առաջին հեղափոխության ժամանակ՝
1905—1907 թվերին: Հեղափոխությունը պարտություն կրեց:
Ցարիզմը դիմացավ և ապստամբների հետ դադանաբար դատաս-
տան անուամը: Բայց լենինի—Ստալինի կուսակցությունը ջախ-
չախված չեր: Բոլշևիկները կազմակերպեցին բանվոր դասակար-
գը, գյուղացիությանը սերտորեն համախմբեցին նրա շուրջը և
ժողովրդին նորից վոտքի հանեցին պայքարի: 1914 թվի հուլիսին
Պետերբուրգում բանվորները զուրու յեկան ցարական իշխանու-
թյան դեմ: Մայրաքաղաքի փողոցները ծածկվեցին բարիկադ-
ներով:

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ՓԵՏՐՎԱՐԵԱՆ
ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1914 թվի բարիկադային կոխվը հեղափոխությամբ շվերջա-
շավ: 1914 թվի հուլիսի 19-ին սկսվեց համաշխարհային պատե-
րազմը: Հնձի յեռուն ժամանակ յերիտասարդությանը ուղղակի
դաշտերից բանակ քշեցին: Հառաջանքն ու խուլ հեծկառոցը բանել
եր ամբողջ դյուզերը: Մայրերն ու կանայք դեպի ֆրանս և
ին ճանապարհ զցում իրենց տղաներին ու կերակրողներին: Յեռ-
նալորված յերկու գթանոց ուղղմական հանդերձանքով, փոշուց
շնչառում յեղած ուսւական զինվորները զժկամությամբ ըն-
թանում եյին գեպի ֆրոնտի զիծը: Սահմանի մյուս կողմում
նույնպես զժկամությամբ շարժվում եյին մոբիլիզացիայի յեն-
թարկված զերմանացիները: Վոչ մեկը, վոչ մյուսը չգիտեր, թէ
ինչու համար և կովում ինքը: Մուսական զինվորներին ասում
եյին, թէ զերմանացիները հարձակվել են Ռուսաստանի վրա, իսկ
գերմանական զինվորներին հավատացնում եյին, վոր ուսւական
ցարն անսպասելի կերպով գրուել ե իրենց յերկրի վրա: Ֆրան-
սական ու անդիմական զինվորներին նույնպես ներշնչում եյին,
թէ նրանք կանչված են պաշտպանելու իրենց յերկիբը:

Իրականությունն այդպիս չեր: Տեր ու տնօրենները խոշոր
կազմիտալիստներն եյին: Կառավարությունները միայն նրանց
կամքն եյին կատարում: Վիթխարի Փարբիկանները դուրս եյին թո-
փամա հակայական քանակությամբ ապրանքները: Հարկավոր եր
այդ ապրանքը վաճառել: Դյուղացիները, վորոնց կողաստել ե-
ւին կալվածատերերը, բանվորները, վորոնք ցածր աշխատավարձ
եյին ստանում, չեյին կարող արտադրվող ամբողջ ապրանքը
դնել: Կապիտալիստները պետք ե ուսար յերկրներում վաճառեյին
այդ ապրանքը: Ֆարբիկանների ու գործարանների համար հու-
մույթ եր պետք՝ կառւչուկ, բամբակ, կանեփ: Պետք եր վառե-
լանյութ՝ նավթ, ածուխ: Բոլոր յերկրների կապիտալիստներն
աղաւությամբ նոր հողեր եյին վիճակում նրա համար, վորպեսզի
այնաշեղից դուրս քաշեն հումույթն ու վառելանյութը, այնտեղ

Նոր Փաբրիկաներ ու գործարաններ կառուցեն և միաժամանակ տայտեղ վաճառահաննեն պատրաստի արտադրանքի ավելցուկները:

Բոլոր յերկրների կապիտալիստները կողոպտիչ նվաճողական պատերազմներ եյին մղում: Կապիտալիզմի համար այդ սլատերազմները նույնպես անխուսափելի յեն, ինչպես բանվոր դասակարգի շահագործումը: Գերմանական, անգլիական, ֆրանսական, ամերիկական, ուսւական կապիտալիստներն անվատկառորեն ամրող մարդեր եյին հափշտակում Ասիայում, Աֆրիկայում, Ավստրալիայում: Ամեն մի առիթից ողտվում եյին, վորպեսդի ազատ յերկիրը գաղութ դարձնեն: Յերկար ժամանակ տեսեց ուրիշի հողերի ու ժողովուրդների հափշտակումը: Միլիոնավոր աշխատավորները ընկան Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի կապիտալիստների իշխանության տակ: Այլևս աղաս հող չմնաց: XX դարի սկզբներին ամրող հողը հափշտակված ու բաժանված եր խոշոր պետությունների միջև: Նոր դաղություններ կարելի յեր ստանալ միայն խլելով դրանք մի վորեւ պետությունից:

Կապիտալիզմի պայմաններում առանձին յերկրներ համաշխափ չեն զարգանում—վոչ թէ այնպես, վոր մի յերկիր, մի անդամ գրավելով առաջին տեղը, յերկար ժամանակ մնա իրեւ առաջավոր: Մի յերկիրը մյուսից առաջ և անցնում: Առանձնապես անշամաշափուրեն, թուչքներով են զարգանում կապիտալիզմի յերկրները XIX դարի վերջերից և XX դարի սկզբներից: Այդ ժամանակներին կապիտալիզմն աճեց, թևակոխեց իր բարձրագույն և վերջին ստադիան՝ իմպերիալիզմի ստադիան: Կապիտալիստների հոկա միավորումները (մենաշնորհները) և վիթխարի բանկերը իմպերիալիզմի պայմաններում վճռական դեր են խաղում: Մի բուռ բանկերներ ու արդյունաբերողներ գերիշխում են մի ամրող յերկրի վրա:

Մինչև XX դարն Անգլիան խոշորագույն ծովային պետություն եր: Նրան եր պատկանում գաղութների մեծ մասը: Անգլիամենը 40 միլիոն բնակչություն կար, իսկ նրա գաղութներում՝ 400 միլիոն: Գերմանիան բավականաչափ գաղութներ չուներ կողոպտելու համար: Գերմանական իմպերիալիստները վորոշեցին մեծ նավատորմիդ կառուցել և խլել անգլիացիները: Անգլիան, վորի բանակն ավելի փոքր եր, քան գաղութները: Անգլիան, վորի բանակն ավելի փոքր եր, քան գերմանիայի բանակը, սկսեց իր համար գաճակիցներ վնասել, գերմանացիների բանակն ու նավատորմը ջախջախելու նախատ-

Ֆրանսիայի և Գերմանիայի կապիտալիստների միջև նույն պես վաղուց ի վեր վեճեր կային: Ֆրանսական բուրժուազիան շատ յերկաթահանք ուներ, բայց քիչ ածուխ, իսկ գերմանացիները սահմանին շատ մոռ՝ Ռուսի մարզում, շատ ածուխ ունեյին, իսկ յերկաթահանք չունեյին: Ով մի ձեռքում կմիացնի ածուխը յերկաթահանքի հետ, կամ հանքը ածխի հետ, նրա մոռ ավելի արագ կզարդանա արդյունաբերությունը: Նա ավելի շատ շահութ կտանա: Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև դատավեճ սկսվեց՝ ո՞վ ումնից կխլի պակասող յերկաթահանքը կամ ածուխը:

Կային և ուրիշ վիճելի հարցեր: Ֆրանսիան ավելի շատ գաղութներ եր զուիել, քան Գերմանիան: Գերմանական կապիտալիստները պահանջում եյին, վոր ֆրանսական կապիտալիստներն այդ գաղութներից բաժին հանեն գերմանացիներին:

Ֆրանսիան Անգլիայի հետ համաձայնության յեկավ Գերմանիայի գեմ կովելու համար: Այդ համաձայնությունը ֆրանսերեն կոչվում եր «անտանտ կորդիալ» — «սրտագին համաձայնություն», — այստեղից ել առաջանում և Անտանտ անունը:

Ռուսաստանը դեռ ավելի առաջ եր համաձայնվել ֆրանսիայի հետ: Ռուսական կապիտալատերերին ու կապիտալիստներին արդեն քիչ եյին թվում թալանված հողերը. նրանց նոր հողեր եյին հարկավոր: Նրանք իրենց ձեռքը մեկնում եյին գեղի Գալիցիա: Նրանք ցանկանում եյին հափշտակել թյուրքիայի մայրաքաղաքը՝ կոստանդնուպոլիսը, վորը գտնվում է Սև ծովի հենց մուտքին: Կոստանդնուպոլիսի մոտով եյին անցնում հացով ու նավով բեռնված ուսւական նավերը: Պատերազմների ժամանակ թյուրքերը հաճախ փակում եյին նեղուցը ուսւական նավերի առաջ:

Բայց Գալիցիան դժոնվում եր Ալյոստրո-Հունգարիայի ձեռում, իսկ Կոստանդնուպոլիսը ցանկանում եյին գրավել նաև գերմանացիները: Գերմանիան հանդես յեկավ թյուրքիայի ու Ավստրո-Հունգարիայի կողմից: Հենց այդպես ել կաղմվեց թըշ-նամական յերկու կողմ՝ Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, իսկ նրանց գեմ՝ Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թյուրքիա:

Պատերազմը պատրաստում եյին շատ տարիների ընթացքում: Կառուցում եյին նավեր, հավաքում եյին պաշտեղեն և ուշագրությամբ հետեւում եյին մեկը մյուսին, սպասելով հարմար մոմենտի՝ հարձակման համար: Պատերազմ հայտարարելու համար առիթ հանդիսացավ ավստրիական թագաժամանդի սպանությունը

1914 թվի հունիսին, վորը կատարվեց մի սերբ ռւանողի ձեռքիվ :

Ավտորո-Հունդարիան պատերազմ հայտարարեց Սերբիային: Սերբիային պաշտպան կանդնեց Ռուսաստանը, Ավտորո-Հունդարիային՝ Գերմանիան: 1914 թվի հուլիսի 19-ին (ոգոստոսի 1-ին) Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին: Ռուսաստանը պատերազմի մեջ մտավ: Պատերազմն սկսվեց, իսկ միքանի ամիս հետո արդեն մոտ 70 միլիոն յերիտասարդ, առողջ մարդիկ կանգնեցին հրացանի տակ: Յերբ պատերազմն սկսվեց, յերկու կողմերին ել հարեցին նոր յերկրներ՝ Գերմանիային հարեցին Բուլղարիան և Թյուրքիան, իսկ Անտանտին՝ Բելգիան, Խոտիան, Յալոնիան, Ռումինիան և Ամերիկան:

1914 թվի պատերազմը կողոպտիչ ու հափշտակողական պատերազմ եր ինչպես Անդիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի կողմից, այնպես ել Գերմանիայի ու նրա դաշնակիցների կողմից: Բոլոր յերկրների կապիտալիստներն ել հավասարապես հարձակման ելին պատրաստվում: Նրանք նոր հողերի, նոր շահույթների հետեւց եյին ընկել:

ԼԵՆԻՆԸ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Լենինը քանիվոր դասակարգին վաղուց նախազգուշացնում եր, վոր կապիտալիստները պատերազմ են նախապատրաստում: Պատերազմը սկսվելիս Լենինը գտնվում եր Գալիցիայի Փորոնիոն կոչվող փոքր գյուղում, վորն այն ժամանակ Ավտորո-Հունդարիայի կազմի մեջ եր մտնում: Լենինը ցարական ժանդարմների հետապնդումներից ստիպված եր թագնվել արտասահմանում: Լենինը Պորոնիոն յեր տեղափոխվել Ռուսաստանին մոտիկ լինելու համար: 1914 թվի հուլիսի 25-ին մի ժանդարմ մտավ Լենինի բնակարանը և սկսեց խուզարկություն կատարել: Լենինին ձերբակալեցին ու բանտ նստեցին: Ավտորիական ժանդարմները Լենինին ուղարկան ցարի լրտես հայտարարեցին: Լենինի մասին ասում եյին, թե նա ման է յեկել սարերում և նկարահանել և ճանապարհները: Այդպիսի ժեղադրանք շարտեցին մի մարդու, վորն ամբողջ կյանքը նվիրել եր ցարի գեմ մզկող պայքարին: Լենինին գնդակահարություն եր սպառնում:

Լենինի կինը՝ Կրուսպակայան, նախազգուշացրեց բոլշևիկյան կենտրոնական կոմիտեյի անդամներին Լենինի ձերբակալման մասին: Ակտիւցին միջամտություններ: Ավտորիական մինիստրնե-

բին ապացուցում եյին, վոր Լենինն իր ամբողջ կյանքում ցարին թշնամի յե յեղել:

«Դուք հավատացա՞ծ եք, վոր Ռույանովը ցարական կառավարությանը թշնամի յե, —հարցնում եր մինիստրն այն ընկերոջը, վորը բարեխոսում եր Լենինի համար:

«Ո՛, այո՛: Շատ ավելի վսիերիմ թշնամի, քան Զերդ զերազանցությունը» —պատասխանեց նա:

Լենինին բաց թողին: Հեղափոխության առաջնորդը տասնմեկ որ նստեց բանտի հեղձուցիչ, կեղտու, լեփեցուն կամերայում: Նրա հետ միասին նստած եյին տեղական շառ գյուղացիներ՝ վոմանք հարկերը չվճարելու համար, մյուսները կուլակների զեմ ունեցած յելույթների համար: Լենինը, ինչպես անում եր նա Սիրիի Շուշենսկոյե գյուղում աքսորական յեղած ժամանակ, այստեղ ես ոգնում եր գյուղացիներին խորհուրդներով գրում եր զիմումներ: Գյուղացիները շատ եյին հարգում լենինին, անվանելով նրան՝ «ամուր մուժիկ»:

Լենինն Ավտորիայից Շվեյցարիա տեղափոխվեց: Նա այդանուից Ռուսաստան՝ բոլշևիկների կուսակցության ղեկավարներին ցուցումներ եր ուղարկում, թե ինչպես պետք է պայքարել պատերազմի գեմ:

Բոլշևիկները գեմ չեն յեղել ամեն անսպակ պատերազմի: Լենինը սովորեցնում եր, վոր պատերազմները մինում են արդարացի և վո՛չ արդարացի՝ կողոպտիչ, հափշտակողական: Այն պատերազմը, վոր մզում և ժողովուրդը կապիտալիզմի ստրկությունից ազատելու համար, արդարացի պատերազմ է: Այն պատերազմը, վոր մզում և ժողովուրդն արտաքին հարձակման դեմ ու ժողովրդին ստրկացնելու փորձերի գեմ, արդարացի, աղատագրական պատերազմ է: Այն պատերազմը, վոր մզում են զազությային ժողովուրդներն ու կախյալ յերկրներն իմպերիալիզմի գեմ՝ արդարացի պատերազմ է: Այսպիսի պատերազմները բուշիկները պաշտպանում են:

Այլ բան է իմպերիալիստական պատերազմը: Այդ պատերազմն առաջացրել են կապիտալիստները, նա ոկզիրց մինչև վերջը կողոպտիչ է: Պրոլետարիատը չի կարող այդ կողոպտիչ պատերազմին զնալ բուրժուազիային պաշտպանելու, կապվածառերերի ու կապիտալիստների հայրենիքը պաշտպանելու: Բայց այդ չի նշանակում, վոր բանվորները պետք է դառնալքեն Փրոնտը: Ամենեկին վոչ: Բանվոր դառնակարգը պետք է բանակ զնա կրակի սպառելու, վորպեսզի յերկրների միջև մզկող կողոպտիչ պատե-

րազմը վերածի քաղաքացիական պատերազմի, վերածի պրոլետարիատի պատերազմի՝ բուրժուազիայի դեմ, վերածի հեղափոխության։ Այդպես պետք ե վարդեն բոլոր ազնիվ պրոլետարները՝ բոլոր պատերազմող յերկրներում։

Լենինը ցույց տվեց, թե ինչ պետք ե ասեն պրոլետարական հանայք իրենց զավակներին՝ «Դու շուտով կմեծանաս։ Քեզ հրացան կտան։ Վերցրու հրացանը և լավ սովորիր ռազմական գործը։ Այդ գիտությունն անհրաժեշտ է պրոլետարներին՝ վոչ թե նրա համար, վորպեսզի կրակես քո յեղայրների՝ ուրիշ յերկրների բանվորների դեմ, ինչպես այդ արվում և այժմյան պատերազմում և ինչպես քեզ խորհուրդ կտան անելու սոցիալիզմի դավաճանները, —այլ նրա համար, վորպեսզի կովես քո սեփական յերկրի բուրժուազիայի դեմ, վորպեսզի վերջ դրվի շահագործման, աղքատության ու պատերազմներին՝ վոչ թե բարի ցանկությունների միջոցով, այլ բուրժուազիայի վրա հաղթանակ տանելով և նրան զինաթափ անելով»։ (Լենին, Հատ. XIX, եջ 328)։

Հեղափոխության նախապատրաստումը կրժվարացնի բուրժուազիայի դրությունը բոլոր յերկրներում, այդ թվում նաև Ռուսաստանում և կարող ե յերկիրը ռազմական պարտության մատնել։ Իսկ բուրժուազան պետության պարտությունը կհեշտացնի և կարագացնի հեղափոխությունը։ Մենք չենք պաշտպանում բուրժուազիայի հայրենիքը, այլ պետք ե կովենք բուրժուազիայի պետության դեմ, —սովորեցնում եր Վլադիմիր Իլյիչը։

Այնպիսի քաղաքականություն, վորի նպատակն ե պարտության մատնել իր իմակերիալիստական կառավարությունը, պետք ե անցկացնեն վոչ միայն բոլշևիկները, այլև բոլոր պատերազմող յերկրների հեղափոխականները։ Պատերազմն աշխատավորներին յերկրների հեղափոխականները։ Պատերազմն անհայիկ գրաբախտություն պատճառեց։ Ամենուրեք աճում ե անհայիկ գրաբախտություն կեմ։ Ուժեղացել ե գաղանվորների բողոքը իմակերիալիստների դեմ։ Շողովորդների հուզմունքը՝ զութեային ու կախյալ յերկրների ժողովորդների հուզմունքը՝ մատերալիստների դեմ։ Միաժամանակ պատերակիալիստական դիշատիչների դեմ։ Միաժամանակ պատերազմը բուրցրեց իմակերիալիստների ուժերը, հնարավոր գարձրազմը թուլացրեց իմակերիալիստների գումարը։ Վորտեղ նա թուլացեց ճեղքել իմակերիալիզմի ֆրոնտն այնտեղ, վորտեղ նա թուլացել ե։ Ուսումնասիրելով իմակերիալիզմը, լենինը յեկալ այն ցել ե։ Ուսումնասիրելով իմակերիալիզմը, լենինը յեկալ այն ցել ե։ Այդտեղ, Սիրիրի ռոսկալի պայմաներում, լսմալի աղոտ լույսի տակ աշխատում եր Ստալինը։ Կերոսինը հարկավոր եր խնայել, վորովհետեւ նրա ձեռքբերելը ծայր աստիճան գժվար եր։ Հեռու աքսորում Ստալինը հոգվածներ եր գրում։ ճնշված աղդությունների կողմից ցարիզմի գեմ քզլող պայքարի մասին։

Լենինը «տվեց նոր թեորիական դրույթ, վորի համաձայն սոցիալիզմի հաղթանակը բոլոր յերկրներում միաժամանակ անարին և համարվում, իսկ սոցիալիզմի հաղթանակն առանձին վերցրած մեկ կապիտալիստական յերկրում հնարավոր և բնդուն վում» («Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության պատմության համառոտ դասընթաց», եջ 163, հայ. հրատ., եջ 229)։

Լենինի այդ թեորիան չափազանց հարստացրեց մարքսիսմը։ Նա առվորեցնում է մարքսիստներին ողբարձործելու պատերազմը, իրենց բուրժուազիայի դեմ կովելու համար։ Նա արձակում է հեղափոխականների ուժերն ամեն մի յերկրում։ Այդ թեորիան ամրացնում է հավատը դեպի պրոլետարական հեղափոխության հաղթանակը։

Եեկալվարվելով այդ թեորիայով, բոլշևիկները վոչ մի բողեքադարեցրին իրենց հեղափոխական աշխատանքը։ Նրանք կոչ ելին անում պրոլետարիատին՝ իմպերիալիստական պատերազմը վերածելու քաղաքացիական պատերազմի։

Ցարական կառավարությունն իր ամբողջ ուժով նետվեց բուշկիյան կուսակցության վրա։ Ցարը կուսակցության լավագույն մարդկանց աքսորեց տաժանակիր աշխատանքի։ Ստալինը, Սվերդլովը, Զերժինսկին, Ֆրունզեն տանջվում ելին աքսորում կամ նստած ելին բանտի ամուր պարիսպների հետևում։ 1913 թվին Ստալինը ձերբակալվեց, Սիրիրի փախչելուց հետո։ Այս անդամ ցարիզմը լենինի զինակցին շատ ալելի հեռու աքսորեց՝ գրեթե բուն ընկուային շրջանի մոտ՝ Արևելյան Սիրիրի փոքրիկ կուրքելակը։ Ստալինին հսկելու համար նրա մոտ յերկու պահնորդ ելին կանգնեցրել։ Այդտեղ, Սիրիրի ռոսկալի պայմաներում, լսմալի աղոտ լույսի տակ աշխատում եր Ստալինը։ Կերոսինը հարկավոր եր խնայել, վորովհետեւ նրա ձեռքբերելը ծայր աստիճան գժվար եր։ Հեռու աքսորում Ստալինը հոգվածներ եր գրում։ ճնշված աղդությունների կողմից ցարիզմի գեմ քզլող պայքարի մասին։

Հարյուրավոր լավագույն բոլշևիկներ շվեյշակապ աքսորվում ելին տաժանակիր աշխատանքի։ Բայց ձերբակալություններն ու մահապատիժները չելին կանգնեցնել բոլշևիկների աշխատանքը։ Նրանք բանակ ելին զնում, վորտեղ թվիներ ելին առեղծում զնդերում։ Բոլշևիկներն անձնվիրաբար աշխատում երին գործարաններում ու Փարբիկաններում։ Վոստիկանությունը բանում եր համարձակ բոլշևիկներին։ Ձերբակալվածների փոխա-

բնմ վատանգավոր աշխատանքի ելին անցնում կռւսակցության նոր անդամներ:

Գետական դուման, վորտեղ նստել ելին կալվածատերերի ու բուրժուազիայի ներկայացուցիչները, պաշտպանում եր ցարին: Միայն հինգ բոլլեկիներ, բանվոր դասակարդի ներկայացուցիչները, համարձակ և վճռականորեն հանդես յեկան ցարի դեմ: Բանվորների պատղամավորներ՝ Գ. Ի. Պետրովսկուն, Մ. Կ. Մուրանովին, Ա. Յ. Բաղդայելին, Ֆ. Ն. Սամոյլովին և Ն. Ռ. Շատովին աքսորեցին տաժանակիր աշխատանքի: Միայն բոլլեկիներն ելին, վոր պատերազմի գծվար տարիներին իրենց համարձակ պայքարով ցույց տվին պրոլետարիատին, թե ինչպես պետք է վերջ դնել կողապահիչ, արյունահեղ պատերազմին:

Մենչեւիներն ու եսերները պաշտպանում ելին ցարին ու բուրժուազիային, ժողովրդի թշնամիների հետ համաձայնության դալու, միություն կազմելու կոչ ելին անում: Այդ պատճառով ել մենշևիներին ու եսերներին համաձայնողականներ ելին անվանում: Նրանք բանվորներին առաջարկում ելին դադարեցնել բուրժուազիայի դեմ մզվող պայքարը և ամբողջ ուժը նվիրել ցարական թուսաստանի պաշտպանությանը: Մենչեւիներն ու եսերները պաշտպանողականներ ելին:

Այդպես վարչեցին նաև Ա ինտերնացիոնալի բոլոր կուսակցությունները: Ֆրանսական ոսցիալ-դեմոկրատներն ողնում ելին ֆրանսական բուրժուազիային, գերմանական ոսցիալ-դեմոկրատները՝ գերմանական բուրժուազիային: Միայն մի քանի համարձակ, ազնիվ հեղափոխականներ չվեցին բանվորներին: Դրանք ելին, կարև Լիբերները, Ռոզա Լուքսեմբուրգը, Կարա Յետկինը, Ֆրանց Մերինգը:

ՅԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ցարական թուսաստանը հետամնաց յերկիր եր: Այդ յերեան յեկավ նաև պատերազմի հենց առաջին որերը: Հետամնաց արդյունաբերությունն առանց արկի թողեց բանակը: Գյուղատնտեսաթյան հետամնացության պատճառով քաղաքներում հացը չեր բառականանում բանվորներին: Ամբողջ իրավակարգի հետամնացությունը հասցեց այն բանին, վոր բանակի գլուխ կանգնեցին վատի վատ հրաժանաւարներ—կալվածատերերի և բուրժուաների վատի-կակայաց զալակները, վորոնք գերազասում ելին թիկունքում նըս-տել, քան թե իրենց զուել ֆրոնտում: Նիկոլայ Ա-ի անշնորհք մինիստրները յենթագրում ելին, վոր պատերազմը չորս-հինգ

տամբու կաեկի: Մազմամթերք ելին պատրաստել կարճ ժամանակի վահանակ: Շուտով բանակը մնաց առանց հանդերձանքի, առանց հրացանի ու փամփուշտի: Գնդերի վերջին շարքերը դնում ելին տուանց հրացանի և վերցնում ելին սպանված ընկերների հրացանը: Վաճառված գեներալները չկարողացան կազմակերպել պատերազմը:

Դերմանավան գնդացիբները հնձում ելին ուռուական անգեն զինվորներին: Մանր հրեանին վոչչացնում եր սուսական ժարտկոցները: Թունավոր զադերը խեղդում ելին հազարավոր զինվորների, վորոնք հակագազեր չունեյին: Մի պարտության հետեւում եր այլ պարտություն:

Թիկունքում ավելի լավ չեր: Ցարը պատերազմի համար մուբիլիզացիայի յենթարկեց մոտ 14 միլիոն ժարդ: Գյուղը մնաց առանց աշխատողների: Դաշտերն ամայացան: Շատ Փարբիկաներ ու զործարաններ փակվեցին: Մնացած Փարբիկաները, չթի ու կոչկի փոխարեն, արտադրում ելին ուռմբեր ու թնդանոթներ: Բոլոր մթերքները թանգացել ելին: Վրա յեր համառում սարսափելի սովոր: Սպեկուլանաներն ու կուլակները հացը թանդ դնով ելին վահանում:

Խոկ պատերազմը գեռ շարունակվում եր: Փրոնառում վոշնչանում ելին միլիոնավոր ժարդիկ: Զորքի պակասը լրացնելու համար նոր մորիկիզացիաներ ելին հայտարարում: Սկսեցին վերցնել զրեթե յերեխաններին: Ամենուրեք աճում եր գժգոհությունը: Քաղաքներում սկսվեցին բանվորական զործադրութներ: Գյուղերում նորից սկսեցին՝ գիշերները «կարմիր աքաղաղ» բաց թողնել՝ հրկիցել կալվածատերերի գույքը:

Ճնշված արդությունների մեջ ապատամբություն սկսվեց ցարիդմի դեմ:

1916 ԹՎ.Ի ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

1916 թվին Միջին Ասիայում ապատամբեցին դազակները, կիրդիդները, տաջիկները, ուղբեկները: Ցարական շինովնիկները պաղաքեր հողերից դեպի ամայի տափասաններն ելին քշում նրանց: Ցարական սպասավորներն իրենք ելին վերցնում կիրդիդների հողերը: Պատերազմի ժամանակ ցարական կառավարությունը հրամայեց մորիկիզացիայի յենթարկել կիրդիդներին և ուղբեկներին՝ բանակի թիկունքային աշխատանքների համար: Նրանց հազարներով ուղարկում ելին հարազատ վայրիրից հետո,

ՄԵՐՃՔԱՂԹՅԱՆ ՀՐՅԱՆՆԵՐԸ ԿԱմ ԲԵԼՈՊՈԽԻԽԱ՝ ԽՐԱՄԱՏՆԵՐ ՓՈՐԵԼՈՒ
ՀԱՄԱՐ : Հարուստները կաշառքով աղատվում եյին մորիլիզա-
ցիայից : Բայց ժողովրդական մասսաները պետք է իրենց վրա
կրեյին մորիլիզացիայի ամբողջ ծանրությունը :

Ճնշված աղքությունների համբերությունը հատակի Ապըս-
տամբություն բանկեց : Կիրդիզները դուրս հանեցին հին հրացան-
ները, զինվեցին իրենց ձեռքով պատրաստած նիզակներով, գե-
րանդիները վերածեցին թրերի : Կիրդիզներին ողնեցին ուղբեկնե-
րը, դադախները, թուրքմենները :

Յարական կառավարությունը դաժանորեն գատաստան տեսալ ապստամբների հետ : Ստեղծվեց հատուկ պատժիչ բանակ՝ վորի գլուխ կանգնեց գեներալ Կուրոպատակինը : Խուս-յապոնական պատերազմի ժամանակ նա ուսւական զորքերի հրամանատարն եր Յապոնացիները Կուրոպատակինին ջախջախել եյին : Պատերազմում կրած իր պարտությունը գեներալ Կուրոպատակինը ցանկանում եր «քաշվել» ապստամբների հետ գատաստան տեսնելով : Կուրոպատակինն այրում եր գյուղերը, զլատովին վոչնչացնում եր ամբողջ բնակչությունը : Միայն Պրժեվալսկ քաղաքում Կուրոպատակինը վոչնչացրեց 700 մարդ : Ապստամբությունը ջախջախելուց հետո կուրոպատակինը ապստամբների դեմ դատ կազմակերպեց : 347 Հոգի դաղախ, կիրդիզ, ուղբեկ ու թուրքմեն կախաղան բարձ- րացվեցին, Հարյուրավոր մարդիկ աքսորվեցին տաժանակիր աշ- խատանքի : Յարական չինովնիկները խլում եյին ապստամբների հողերը : Կողոպուտը մինչև այն տեղը հասավ, վոր մի դաշտասում 2 հազար հեկտար պտղաբեր հող խլեցին : Հազարավոր ապստամբ- ներ ցարական դատաստանից փախչում եյին դեպի Հարկան Զի- նաստանի :

Ուստամբը :
Ուստական ցարը արյան մեջ խեղեց ալսոտամբությունը
Բայց այժմ արդեն բոլոր աշխատավորների համար պարզ յեղավ
վոր ժողովուրդների ցարական բանտի պատերը ճաքճքում են
վոր ճնշված աղղերն ամեն բռպէ պատրաստ են պաշտպանելու
հեղափոխությունը :

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԲՈՒՐԺՈԽԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ

1917 թվի վետրվարին Պետրովը առաջում դործաղուլ արին պատմիլովցիները այդ խոշորագույն դործարանի բանվորները։ Դի բեկտորը սպառնաց «խոռվարաններին» Փրոնտ ուղարկել բայց բանվորները դործադուլը չարունակում ելին։ Փետրվարի

22-ին գործարանատեղերը բոլոր բանվորներին արձակեցին։ Հաջորդ որը 30 հազար պուտիլովցիներ շարժվեցին դեպի քաղաքի կենտրոնը։ Փետրվարի 23-ին (նոր տօնմարտվ մարտի 8-ին)՝ այս որը, յերբ կանայք ամբողջ աշխարհում ցույց են կազմակերպում ընդդեմ կապիտալիստական իրավազրկության ու ստրկության, բանվորուհիները դուրս յեկան փողոց և միացան պուտիլովցիներին։ Յերեացին կարմիր դրոշակներ։ Պետրոգրադի փողոցներում թշնդում եյին հեղափոխական յերգերն ու «Հա՛ց», «Խաղաղությո՛ւմ» բացականչություններ։

Յույցերը կրկնվեցին վետրվարի 24-ին և 25-ին։ Բանվորները գնում ելին գործարանները և գործադուլի ելին հրավիրում։ Տեղ-տեղ վնստիկանության հետ ընդհարումներ սկսվեցին։ Փետրվարի 25-ի յերեկոյան Պետրովրադի բուշեկները վորոշեցին շարունակել գործադուլը և կապվել զինվորների հետ։ Կայազորում մոտ 200 հազար մարդ կար։

Զինվորները մինչ այդ դեռ մնում եյին ցարիքմի կողմը։ Նրանց զուրս բերին բանվորների դեմ։ Փողոցներում զինվորներին շրջապատեցին բանվորութիւները։ Նրանք բռնում եյին հրացանների սկիզբներից և աղերսում եյին զինվորներին՝ չկրակել։

Զինվորները հոնքերը կիսած լուռմ եյին. նրանք վախենում
եյին սպաներից: Բայց տեղ-տեղ կարգապահությունն ակտեց
խախտվել: Հրապարակներից մեկում պրիստավը թրով հարփածեց
մի բանվորուհու, վորը կարմիր դրոշակ եր կրում: Իսկույն
պրիստավի մոտ թռավ մի կազակ և սրախողիսող արեց նրան:

Ուշ զիշերին պահնորդական բաժինն սկսեց ձերքակալել բոլոր կասկածելիներին։ Կալանավորեցին միքանի հարյուր մարդ և նրանց հետ՝ բոլէկիկների կուսակցության Պետրողադի կոմիտեի հինգ անդամներին։ Շարժման ղեկավարությունն անցավ բոլչիկների կողով այսպիսական անդամներին։

Փետրվարի 26-ի առաջնուն արտաքուստ հանգիստ սկսվեց Քաղաքի գեներալ-նահանգապետը՝ նույնիսկ հեռազբեց ցարին վորը դանվում եր ուղմաճութափի շտաբում. «Եյտոր առավոտ-վանից ամեն ինչ հանգիստ ե»: Բայց գեներալը սխալվեց: Ցերե-կը բանվորների խմբերը փողոց դուրս յեկան ու շարժվեցին դեպի քաղաքի կենտրոնը: Ցերեացին գրոշակներ ու պլակատներ՝ «Կոր-չի՛ պատերազմը», «Կորչի՛ ցարը»: Զինվորները կրակ բացին ցու-ցարարների դեմ: Մոտ 40 մարդ սպանվեց ու վիրավորվեց: Տաղ-մությունը ցրվեց: Ցարական սպասավորները դարձյալ հաղթա-նակ ենին տոնում: Միան մի լուր անհաճո կերպով ապշեցրեց

կառավարությանը՝ Պալլովսկի գնդի մի վաշտ գնդակածել եր
ժամանականությանը։ Այդ գնդի զինվորներին զինաթափ արին։
Կառաված սպաները ձերբակալեցին նախաձեռնողներից տասնիննը
հոգու։ Նրանց գնդակահարությունն եր սպառնում։ Բայց միքանիկ
հրացան պակաս գուրս յեկալ։ Քանամեկ զինվոր զենքը ձեռքին
ոնցել էին ժողովրդի կողմէ։

Հույս միաբարի 27-ի դիշերը գրեթե վոչ վոչ չքննեց : Բան-
գորները պատրաստվում եյին յելույթի : Բոլցեկիները մտել եյին
զօրանոցները՝ զինվորների մոտ, և կոչ եյին անում նրանց հան-
գես գալ բանվորների հետ միասին : Զինվորների մեծ մասը զյու-
ղացիներ եյին : Նրանք առում եյին իրենց հրամանատարներին,
գորսնք Հիմանականում կարլածատեր-ազնվականներ եյին :

Աւշ գիշերին վոլինակի զնդի զորանոցի մի կիսամութ ան-
կյունում հավաքվել եյին մի վաշտից տասնհինգ-ըսան զինոր:
Նրանք խռոք մեկ արբն, վոր հրաժարվեն բանվորների վրա կրա-
կելուց :

Փետրվարի 27-ի առավոտյան, յերբ վաշտի չենքը մատկան և կոպիտ կերպով բարեեց, զինվորները նրան չպատասխանեցին: Սպան գուրս քաջեց ատրճանակը, բայց հենց տեղի ու աեցը սպանվեց: Վերցնելով մարտական փամփուշտները, զինվորները, առանց սպաների, դուրս յեկան փողոց, վորպեսզի միանան ազստամբ բանվորներին: Վոլինեցների ապստամբության լուրը կայծակի արագությամբ տարածվեց ամբողջ քաղաքում: Վոլինեցներին ոկտեցին միանալ նոր զնդեր: Ապստամբ զինվորները շարժվեցին դեպի Վերորդի շրջանը: Վերորդի շրջանի բանվորները ճեղքեցին-անցան վոստիկանության ջոկատների միջուն: Բանվորների հեղափոխությանը միացավ զինվորների ապստամբությունը: Բանվորները զինվորներին առաջնորդեցին վոստիկանության ու ժանդարմերիայի գեմ: Յերեկը քաղաքը զտնվում եր ապստամբ բանվորների ու զինվորական շինել հաղած գյուղացիների ձևուածում:

Ապատամընելիք պայքարը զեկավարում եր բոլշևիկները Կառարունական կոմիտեի բյուրոն՝ Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովի դիմավորությամբ :

Մըլուտովը ծնվել է 1890 թվին։ 16 տարեկան հասակում սահմել է բոլեսիկների կաւասկցության մեջ։ Կազման քաղաքում նաև կանգնած եր ուսանողության հեղափոխական մասի գլուխ։ Յերիտասարդ հեղափոխականները փող ելին հավաքում բանտարկված որոշեկիների համար, իսբակներ ելին կազմակերպում բան-

վարների մեջ։ 1909 թվի գարնանը վոստիկանությունը ձերբակաց-
լեց Մոլոտովին և աքսորեց Վոլոդիմիր Քաջաքը, վորաեղ նա ան-
դուլ աշխատանք եր կատարում յերկաթուղայինների մեջ։ Աք-
սորը լրանալուց հետո Մոլոտովն աշխատում եր Պետերբուր-
գում ուսանողների մեջ։ 1912 թվի սկզբներից Մոլոտովը մաս-
նակցեց բոլշևիկյան «Պրավդա» թերթի կազմակերպմանը։ Մոլո-
տովը, վորը խմբագրության քարտուղար եր նշանակված, աշխա-
տում եր թերթի անմիջական ղեկավարի՝ Ստալինի ղեկավարու-
թյամբ, վարում եր գրադրություն Լենինի հետ։ Թերթը դաս-
տիարակեց տասնյակ-հազարավոր բոլշևիկներ, վորոնք հեղափո-
խության պատմության մեջ մտան վորպես «պրավիստների» սե-
րունդ։ Վոստիկանությունը միքանի անգամ ձերբակալեց Մոլո-
տովին, բայց նա փախչում եր աքսորավայրից և նորից յերեսում եր
Պետերբուրգում, կատարելով բոլշևիկյան կուսակցության աշխա-
տանքը։

Պատերազմի ժամանակ Մոլոտովն աքսորված եր Սիբիր, բայց
նա փախազ այնտեղից և մայրաքաղաք վերադարձավ: Փետրվարի
27-ի յերեկոյան Մոլոտովը փողոցային մարտերից ուղղակի
մեկնեց դեպի Տավրիկյան պալատը. այնտեղ եյին գնում բանվոր-
ների և զինվորների ցույցերը: Միքանի գործարաններ և Փարքի-
կաններ արդեն ուղարկել եյին իրենց դեպուտատներին՝ Բանվոր-
ների պատգամավորների խորհուրդ ստեղծելու համար: Մոլոտո-
վը միքանի բոլշևիկ զինվորներ հրավիրեց և նրանց առաջարկեց
շատ կերպով տեղեկացնել կայազորի բոլոր գնդերին, վրայեսզի
յուրաքանչյուր մաս իր դեպուտատն ուղարկի Խորհրդի կազմի
համար: Պետրովգրադի բոլոր գնդերն ուղարկեցին իրենց դեպու-
տատները:

Այդպես 1917 թվին Պետրոգրադում կազմվեց Բանվորների ու գինըորների գեղուտատաների խորհուրդ՝ ի տարբերություն 1905 թվից, յերբ գոյություն ունեին միայն Բանվորների գեղուտատաների խորհուրդները։ Հստ եյության, գնդերի դեպուտատները զինվարական շինել հաղած գյուղացիական գեղուտատաներ եին։ Բանվորները՝ դաշն կնքած գյուղացիության հետ, ինքնակալությանը հաղթեցին։ Բանվորների ու զինվորների գեղուտատաների խորհուրդներն այդ դաշնքի որդանները դարձան։

Յարը ուղղմածակատից պատժիչ ջոկատ ուղարկեց մայրաքաղաքի ապստամբների դեմ, բայց զինվորները հրաժարվեցին կրակել և բանվորների հետ յեղբայրացան։ Բոլորի կողմէից լրէ-



ված Նիկոլայ Արյունաբրուն ստիպված եր Հրաժարվել դահից թե՛ իր և թե՛ իր վորդու կողմից :

ՀԵՂԱՓՈԽԵՐԻԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Գետերբուրգում տեղի ունեցող հեղափոխության լուրը Մոսկ-
վա հասավ 1917 թվի վետրվարի 27-ի յերեկոյան։ Տեղեկու-
թյունները կցկառւ ելին։ ապստամբել ելին բանվորներն ու զին-
վորները, փողոցներում կռիվ եր մզվում։ Մայրաքաղաքների մի-
ջև հեռախոսը չեր աշխատում։ Հեղափոխության լուրն արագու-
թյամբ տարածվեց ամբողջ քաղաքում։ Մոսկվայի բոլշևիկները
կոչ արին բանվորներին՝ աջակցություն ցույց տալ Պետրո-
գրադում տեղի ունեցած անխտամբությանը։ Փետրվարի 28-ի ա-
ռավոտյան խոչըրագույն դրուժարանների բանվորները դորձագուլ
արին։ Յուցցերը դիմեցին գեղի քաղաքի կենտրոնը։ Հեծյալ
ու հետեւակ վոստիկանությունը ջանում եր ներս խրվել բար-
մության մեջ։ Գորոդովոյների վրա տեղացին դայկաներ, բու-
տեր, բանվորները հանում ելին սալահատակի քարերը և շղթառում
ելին վոստիկանների վրա։

Բոլշևիկները բանվորներին առաջարկում ենին դնալ զորացոցները՝ զինվորներին միացնելու հեղափոխությանը։ Միքանի հարյուր բանվորներ, բոլշևիկների ղեկավարությամբ, ուղևորվեցին գեղի Սպասուկի զորանոցները (նախկին Սուխարյովա հրապարակի վրա), վորտեզ կանոնած եր 192-րդ պահեստի հատեակ գունդը։ Զարդելով դարպասը, բանվորները ներս մտան զորացունդը։ Զենց այլակազ ել միտինդ կաղմակերպվեց։ Բոլշևիկների բակը։ Հենց այլակազ ել միտինդ կաղմակերպվեց։ Բոլշևիկները պատմեցին Պետերբուրգում տեղի ունեցած հեղափոխության հաղթանակի մասին։ Ճառերն ընդունվեցին խանդակառ բազականչություններով։

Մարտի 1-ին ամբողջ քաղաքը գործադուլ եր արեւ: Հրեսանին ու ամբողջ կայազորն անցավ ժողովրդի կողմը: Մարտի 1-ի յերեկոյան հսկայական բաղմություն հավաքվեց Բուտիբսկայաքանտի մոտ: «Աղատեցե՛ք հեղափոխականներին», —պահանջում եր բազմությունը, վրա տալով դարպասին: Բազմության ձնշմակ տակ բանտի պետք դուրս բերեց բանտարկյալի խալաթհագած մի խումբ ընկերների:

Նբանց մեջ եր հնագույն հեղափոխական Ֆելիքս Եղովու
դովիչ Զերժինսկին, վորն իր կյանքի քառորդ մասն անց եր կաց-
ըեւ բանտերում՝ բանվոր դասակարգի դործի համար։ Բանվոր-
ները ձեռքի վրա բարձրացրին ազատվածներին և տարան դեպի

քաղաքային դուռմայի շենքը, վրատեղ այժմ գտնվում է Անդինի թանգարանը: Զերժինսկուն ներս տարան մի լուսավառ դահլիճ: Անովլոր, աչք ծակող լուցսից աչքերը կկոցելով, Զերժինսկին հրաբորովք, կրակու ճառ արտասանեց: Նա կոչ եր անում պայքարը շարունակել:

Պետրոպալից ու Մոսկվայից հետո անմիջապես բանվորներն ու գյուղացիները տապալեցին ցարական իշխանությունն ամբողջ յերկրում :

ՅԵՐԿԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանվորներն ու զինվորները հաղթանակ եյին տոնում, նրանք անձնվիրաբար կռվում եյին բարիկադներում և ցարիկմին հաղթեցին։ Իսկ վետրվարի 28-ի առավոտյան նրանք անսպասելի կերպով լիմացան, վոր բուրժուազիան և անցել իշխանության դլուխ։ Բուրժուարկան թերթերը հաղորդում եյին, վոր յերկրում կազմված և նոր իշխանություն, վորը բուրժուազիան անվանել և ժամանակավոր կառավարություն։ Մինիստրներ եյին նշանակված խոչորագույն կապիտալիստներ՝ հարսւատ հողատեր իշխան, Լվովը, Մոսկվայի բանկիր ու անատեր Գուչկովը, շաքարի միլիոներ գործարանատեր Տերեչենկոն, տեքստիլ Փաբրիկանու հարուստ Կոնովալովը, բուրժուական պրոֆեսոր Միլյուկովը։ Նրանք բոլորն ել բուրժուարկան կուսակցությունների աջքերն ինքնող զեկավարներն եյին։ Նրանց մեջ եր նաև եսեր Ալեքսանդր Կերենսկին։ Սրան կառավարության մեջ եյին մըտքը էր իբր թե ժողովրդի կողմից։ Բայց իրականում, Կերենսկին, ինչպես նաև նրա ամբողջ կուսակցությունը, կանզնած եր բուրժուարկայի կողմը։ Յերկրում առաջ եր յեկել յերկու իշխանություն՝ Բանվորների ու զինվորների գեպուտատների Խորհուրդը և բուրժուարկան ժամանակավոր կառավարությունը։ Ուժն ու զենքը բանվորների ու զյուղացիների ձեռքումն եր, իսկ իշխանությունը՝ բուրժուազիայի ձեռքում։

Իսկ այդ բանն այսպես պատահեց : Այն ժամանակ, յերբ բոլշևիկները բանվորների հետ միասին կովում ելին փողոցներում, զինաթափ ելին անում վրատիկանությանն ու ժանդարմերիային, համաձայնողականները՝ մենչեփիկներն ու եսերները, Խորհրդում նիստ ելին անում : Հին բանվորները լավ ելին ճանաչում մենքիկներին ու եսերներին, բայց պատերազմի ժամանակամիջում գործարաններն ու Փարբիկաները նոր բանվորներ ելին յեկել : Նրանք միանդամից չհասկացան, թե համաձայնողականներն ում

կողմն են քաշում : Խսոսում ե կարգին, իր կուրծքն ե ծեծում և հեղափոխությանն «ուռա՛» յե կանչում—Հենց նրան ել ընտրում ելին Խորհրդի պատղամավոր :

Շատ զինվորներ նոր միայն յեկել Նյին դյուլից և առաջին անգամն եյին լուսմ «Հեղափոխություն» խոսքը: Նրանք Խորհուրդների մեջ բավականաչափ սպաներ եյին ուղարկել: Այդպիսով, Խորհուրդների մեջ ավելի շատ թվով մենշևիկներ ու եւերներ գուրս յեկան, քան բոլշևիկներ: Մենշևիկներն ու եւերները միշտ կանգնած եյին բուրժուազիայի կողմը: Հենց նրանք եւ Խորհուրդներում վորոշեցին իշխանությունը հանձնել բուրժուազիային, և գեղ խոստացան համոզել ժողովրդին, վոր նա հնագանգվել նոր մինխատրներին: Ահա թե ինչու հանկարծ իշխանության վլուս եյին անցել կամիստալիստները: Բոլշևիկներն այդ բանը բացատրում եյին ժողովրդին:

ՍՏԱԼԻՆԸ ՊԵՏՐՈՎԻՉԱԴՈՒՄ

Մարտի 5-ին Պետրովյան մոտիկ՝ Սեսարորեցկում միտինդ կար։ Հսկայական դահլիճն ու վերնահարկը, վորսեղ տեղավարմում եր ամելի քան 5 հազար մարդ, լցված ելին բանվորներով ու զինվորներով։ Բոլորն ադահությամբ լսում ելին բոլցեակիյան հոկտոբրին, վորը պատմում եր հեղափոխության հաղթանակի մասին։ Հանկարծ նախաղահության մեջ յերեաց նամակարերը՝ հետը մի կապոց թերթ։ Միտինդի նախաղահությանը բացեց կարերը՝ հետը մի կապոց թերթ։ Միտինդի նախաղահությանը բացեց կարերը, և շատերը կարդացին բանվորների համար վաղուց ծանթ և սիրելի թերթի անունը։

«կեցցե՛ հարություն առած պրոլետարական «Правда»-ն, հանդիսավոր բացականչությունները:

Այդպես գիտավորեցին «Правда»-ն, վորություն եր տեսել յերեք տարվա հարկադրյալ լոռությունից հետո։ Պատերազմի նախորյակին ցարը «Правда»-ն փակել եր, վախենալով, վոր նրա հեղափոխական հողվածները բաց կանեն մասսաների աչքը, հակացնելով կալվածատերերի ու կապիտալիստների կողովովէ քաղաքականությունը։

Умстви 12-ին իր վերջին աքսորալայրից Պետրովը պահապահ բարձրական բուհների կենտրոնական Կոմիտեի անդամ Ստալինը: Ստալինը մտցվեց «Правда»-յի խմբագրության կազմի մեջ: Տեղ

Համեմատած հետո, տառացիորեն հենց հաջորդ որը, առանց հանգը վրաստանալու աքսորի գրկանքներից և յերկար ճանապարհին կրած նեղություններից, Ստալինն անմիջապես Հեղափոխական աշխատանքի անցալ՝ Մարտի 14-ին Ստալինը «Պրավդա»-յում գետեղեց իր առաջին հոդվածը։ Պարզ, հասկանալի խոսքերով Ստալինը բանվորներին ու զինվորներին բացատրում էր, թե ինչու եսեմներն ու մենչեւիները Սորհուրդներում մեծամասնություն կազմեցին։ Ստալինը մերկացնում էր բուրժուազիայի հետ եսերո-մենչեւիների կազմած բլոկի եյությունը։ Ստալինը գրում էր, վոր քամանակավոր կառավարությունը բուրժուալիստի և կարլիածատերերի կառավարությունն ե, նրան վստահել չի կարելի։ Ստալինը հանդես եր գալիս պաշտպանողականության գեմ և կոչ եր անում պայքարելու իմակերխալստական պատերազմի դեմ։

Ստալինի՝ Լենինի հավատարիմ զինակցի ղեկավարած «Պրա-
դա»-ն հսկայական կազմակերպական աշխատանք կատարեց։ Նա
բուշենիկների կուսակցության նոր ռւժեր եր հավաքում իր շուր-
ջը։ Թերթի թղթակիցները դառնում ենին կուսակցության կող-
մակերպիչներ, իսկ ընթերցողները՝ կուսակցության անդամներ։

Ստալինի հոգվածները կոչ ելին անում մասսաներին՝ պայքարելու բուրդուական կառավարության դեմ, մոտեցնում ելին նրանց այն համոզմանը, վոր յերկիրը պատերազմի ու սովորակիցներից կարող են ազատել միայն բոլշևիկները, կենինի կուսակցությունը:

ՍՈՅԻԱՀԻՍՏՈԿԱՆ ՄԵՇ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՊԱՏԻԱՏՈՒՄԸ

Լենինը տեղեկացավ հեղափոխության մասին, յերբ գտնվում էր Շվեյցարիայում։ Նա տեսչում էր Ռուսաստան գնալ։ Նա շանկանում էր վորքան կարելի յե շուտ մասնակցել հեղափոխությանը, վորի համար աշխատել եր իր ամբողջ կյանքում։ Բայց Ռուսաստան գնալու ճանապարհն անցնում էր Ֆրանսիայի և Անգլիայի վրայով, իսկ անգլիական ու Փրանսական կապիտալի առները վախենում ելին լենինին անցկացնելուց։ Նրանք գիտեյին, վոր Ռուսաստանում լենինը կպայքարի իշխանությունը բանյորների ու դժուդացիների ձեռքը հանձնելու համար։

Վաղիմիր իլլիչը հուրլում էր։ Զերմորեն ձգտելով դեպի հեղափոխական Ռուսաստան, նա իր տեղափոխման համար շատ ոլլաններ էր ստեղծում։ Կար նաև այսպիսի մի պլան՝ համբ ձեգանալ և անցնել շվեյցարու անցագրով։ Համբ՝ այն պատճառով, վոր լենինը շվեյցերեն չգիտեր։ Բայց կրուզկայան, ծիծաղելով, առում էր նրան։ «Յերազումդ կաղետներ կերեան, կսկսե քնիզ մեջ հայհոյել նրանց և քեզ կմատնես»։

Մուռամ էր մի ճանապարհ՝ Գերմանիայի վրայով, վորի հետ Ռուսաստանը պատերազմում էր։ Ռուսաստանում շատ զերմանացի զինվորական դերիներ կային։ Ռուսական հեղափոխականների անցումը կարելի յեր կազմակերպել դերմանական դերիների հետ փոխանակելու միջոցով։

Հեղափոխությունը զեկավարություն էր պահանջում, և իլլիչը յերեսուն ընկերների հետ վորոշեց մեկնել Գերմանիայով։ 1917 թվի ապրիլի 3-ին լենինը ժամանեց Պետրոգրադ։

Բուրժուական թերթերն իլլիչին դիմավորեցին լուսանքներով, զրագարտությամբ։ Մենշեկիներն ու եսերները ժողովրդին համոզում ելին՝ լենինին ըսել։ Բայց բանվորներն ու զինվորներն այլ ձեռք դիմավորեցին իրենց առաջնորդին։

Դեպի կայարան գնացին հաղարավոր աշխատավորներ։ Բարիկադային կուսիների մասնակիցները, կուսակցության դժու դի-

նակիցները, բանվորները, զինվորները, նավաստիներն անվերջ շարքերով, զրոշակներով ու նվազախմբերով հրապարակը բըռնեցին։ Զինվորներն իրենց հետ զրահապատ ալտոներ բերին։ Արգեն յերելու յեր, լապտերները վառեցին։ Զինվորները կայարանի աստիճանները զրահապատներից լուսավորեցին պայծառ լուսարձակներով։ Սպասում ելին առաջնորդին, վորը, ցարի կամքով, արդեն տասը տարի յե թուաստանում չեր յեղել։ Դնացը մոտեցավ։ Ինչ-վոր մեկը բացականչեց՝ «Յեկա՛վ»։ Դունը, լուսարձակների պայծառ լույսի մեջ յերեաց Վլադիմիր իլլիչը։ Հնչեց վողջույնի «ուռա՛»։ Իլլիչին ձեռքի վրա տարան և բարձրացրին զրահապատը։ Այստեղից լենինն արտասանեց իր առաջին ճառը՝ հեղափոխության մասին։ Այսուհետեւ ամբողջ ցույցը շարժվեց գեպի այն առնը, վորտեղ գտնվում էր բոլշևիկների կենտրոնական կոմիտեն։

ԼԵՆԻՆԻ ԱՊՐԻԼՅԱՆ ԹԵԶԻՍՆԵՐԸ

Ապրիլի 4-ին լենինը բոլշևիկներին զեկուցում կարդաց այն նյութի մասին, թե ինչպես պետք է պայքարել սոցիալիստական հեղափոխության համար։ Իր զեկուցման հիմնական կետերը լենինը գրել էր թեզիների հակիմ, ճշտորոշ Փորմուլաների ձեռով։ Այդ թեզիները պատմության մեջ մտան «Ապրիլյան թեզիներ» անունով։

Այժմ Ռուսաստանում հաղթանակել եր բուրժուական հեղափոխությունը, ասում էր լենինը, իշխանության դլուխ ե կանդնել բուրժուական կառավարությունը։ Այդ կառավարությունը ունշված ժողովրդին խաղաղություն չի տալիս, վորովհետեւ բուրժուազիային պատերազմը ձեռնոտու յե։ Այդ կառավարությունը հողազուրկ գյուղացիներին հող չի տալիս, վորովհետեւ բուրժուազիան, կալվածատերերի հետ միասին, հանդիսանում է հողի սեփականատերը։ Կառավարությունը հաց ել չի տա։ Փողովորդը խաղաղություն, հող ու հաց կստանա, յերբ իշխանությունն ինքը վերցնի իր ձեռքը։ Մեղանում այժմ յերկիշխանություն է։ Բուրժուական կառավարության կողքին դոյլություն ունեն բանվորների ու զինվորների պատգամավորների նորհուրդները, զորոնք իշխանությունը կամավոր կերպով հանձնել են բուրժուազիային։ Գետք է ձգաել, վոր ամբողջ իշխանությունը կորհուրդներին հանձնովի։ «Ամբողջ իշխանությունը նորհուրդներին», —այս պետք է լինի բոլշևիկների լողունով։

Ճիշտ է, կորհուրդներում այժմ նստած են մենշևիկներն ու

Եսերները: Բայց մենք, ապացուցում եր լենինը, պետք է, առանք ձեռքներս ծալելու, աշխատենք բանվորների և դյուլացի չքավորության մեջ: Հարկավոր ե բանվորներին ու դյուլացիներին բացարել, վոր մենչեւկեներն ու եսերները միայն ողնում են բուժուազիային: Մենք բաց կանենք ժողովրդի առաջ մենչեւկեների խսկական դեմքը, ժողովուրդը յերես կղարձնի նրանցից և կտաշտապանի բոլշևիկներին: Խորհուրդներում մեծամասնություն ստանալով, մենք ձեռք կրերենք խաղաղություն, հող, հաց: Նոր իշխանությունը հողը կրոնագրավի կալվածատերից և յերկրի ամբողջ հողը հանրային ունեցվածք կդարձնի, կպետականացնի: Բանվորների ու զինվորների Խորհուրդները հսկողություն կսահմանեն արտադրության ու մթերքների բաշխման վրա: Բոլոր բանկերը կձուլվեն՝ դառնալով մի աղջային բանի, վորը կլինի Խորհուրդների հսկողության տակ:

Լենինի Ապրիլյան թեղիսները պայքարի հանճարեղ ծրագիր եյին. բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից դեպի սոցիալիստական հեղափոխության անցումն սկսելու կոնկրետ պլան եյին:

Բոլշևիկներն իրենց ամբողջ պայքարով պատրաստված եյին այդ հոյակալ-առաջադրանքն իրագործելու ուղղությամբ: Դեռ 1905 թվին Լենինն ասում եր, վոր ցարիզմը տապալելուց հետո պրոլետարիատը կանցնի սոցիալիստական հեղափոխության իրագործմանը: «Թեղիսների մեջ նորու այն եր, —կարդում ենք մենք Համեկ(ր)կ պատմության համառոտ դասընթացում, —վոր նրանք տալիս եյին դեպի սոցիալիստական հեղափոխություն անցումն սկսելու թերիստիկես հիմնալորված, կոնկրետ պլանը» (Եջ 177): Լենինը թեղիսներում ասում եր.

«Բնթացիկ մոմենտի առանձնահատկությունը Ռուսաստանում հանդիսանում է անցումը հեղափոխության առաջին ետապից, վորը պրոլետարիատի անբավարար դիտակից և անբավարար կաղմակերպված լինելու պատճառով իշխանությունը տվել է բուժուազիային, դեպի նրա յերկրորդ ետապը, վորն իշխանությունը պետք է հանձնի պրոլետարիատի և դյուլացիության չքավոր խսկերի ձեռքը» (Լենին, հատ. XX, Եջ 88):

1917 թվի ապրիլի 24-ին Պետրոգրադում գումարվեց բոլշևիկների կուսակցության կոնֆերենցիան: Ապրիլյան կոնֆերենցիան ներկայացնում եր բոլշևիկների կուսակցության 80 հազար կազմակերպված անդամներին: Կոնֆերենցիան քննության առաջ պատերազմի ու հեղափոխության հիմնական հարցերը, այն է՝

իմոլերիալիստական պատերազմի մասին, ժամանակավոր կառավարության մասին, հողի մասին, Խորհուրդների մասին: Հիմնական հարցերի առթիվ զեկուցեց լենինը: Նա մանրամասնութեն զարդացրեց իր Ապրիլյան թեղիսները:

Կոնֆերենցիայում Լենինի դեմ զուրս յեկան կամենելը, Ռիկովը, Զինովյեվը, վորոնը հետագայում զննակահարվեցին վորովես ժողովրդի թշնամիները: Նրանք, ինչպես նաև մենշևկերը, ասում ենին, վոր Ռուսաստանը պատրաստ չե սոցիալիստական հեղափոխության համար: Նրանք կողմնակից եյին կապիտալիզմի պահպանմանը, բուժուազիայի իշխանության պահպանմանը:

Կոնֆերենցիայի պատղամավորները միահամուռ կերպով պաշտպանեցին Լենինին: Կոնֆերենցիան Լենինի պլանը հաստատեց:

Կոնֆերենցիան հսկայական ուշադրություն նվիրեց ցարիզմի կողմից մնչված աղղությունների ճակատագրի հարցին: Լենինն ու Ստալինը զեռ հեղափոխությունից առաջ ել սովորեցնում եյին, վոր բոլշևիկները պետք է պաշտպանեն իմոլերիալիզմի դեմ ուղղոված աղղային աղատագրական չարժումը: Բոլշևիկները պաշտպանում եյին ճնշված ժողովրդների՝ իրենց բախտը վորշեմ իրավունքը, անջատվելու և ինքնուրույն պետություն կազմելու իրավունքը: Բոլշևիկները պայքարում եյին աղղությունների լիակատար իրավահայտապարության հսմար, աղղային ճնշումը վոչնչացնելու հսմար:

Բոլշևիկների այդ ծրագիրն եր պաշտպանում Ստալինը՝ կոնֆերենցիայում տված իր զեկուցման մեջ: Ստալինի դեմ յելույթ ունեցան Պյատակովն ու Բուխարինը, վորոնը նույնպես հետաղյում ժողովրդի թշնամիներ գուրս յեկան: Նրանք պայքարում եյին աղղությունների ինքնորոշման իրավունքի դեմ: Նրանք իրականում պաշտպանում եյին աղղային ճնշումը, ժողովրդների ցարական բանտի պահպանումը: Կոնֆերենցիան մերկացրեց այդ հակալենինյան դիմը:

Բոլշևիկները կոնֆերենցիայից մտասայի մեջ տարան Լենինի ու Ստալինի գաղափարները:

ՄԱՍՍԱՆԵՐԸ ԲՈՒՐՃՈՒՍՁԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

1917 թվի ապրիլի 18-ին (նոր տոմարով մայիսի 1-ին) Ռուսաստանի աշխատավորներն առաջին անգամ բացահայտորեն դուրս յեկան մայիսմեկյան ցույցին: Վոստիկանություն չկար, կաղակները բարձրությանը նաղայիաներով չեյին հալածում: Հա-

պարհերով բազմությունը խանդավառ կերպով կրում եր կարմիք շրջակների: Դրչակների մեծ մասը խաղաղության պահանջն եր դնում: Ժողովուրդը հոգնել եր արյունահեղ պատերազմից: Զինվորները յերազում եյին վերջ տալ սարսափելի պատերազմին և վերադառնալ գեղի խաղաղ աշխատանք: Բոլորն ել հույս ունեցին, վոր յերկար սպասելու կարիք չկա: Յարը առաջարկված է և հարկավոր է մերջ տալ նաև առելի պատերազմին:

Բոլոր հրազդարարակներում դումարվում եյին միտինդներ: Հանդես ելին գալիս մենշևիկներն ու եսերները: Նրանք շատ եյին խոսում խաղաղության մասին, խոստանում եյին վերջ տալ անիծյալ պատերազմին: Բայց մենշևիկներն ու եսերները չեյին խոսում, թե ինչպես պետք է հանձն դրան: Միայն բոլշևիկներն ամենուրեք համարձակորեն ապացուցում եյին, վոր խաղաղություն կարող է կնքել միայն Բանվորա-գյուղացիական իշխանությունը: Բոլշևիկները պահանջում եյին ամբողջ իշխանությունը Խորհուրդներին հանձնել: Բայց գետ վոչ բոլորն եյին լսում բոլշևիկներին: Շատերը հավատում եյին մենշևիկներին ու եսերներին, հայտառում եյին ժամանակավոր կառավարությանը:

Յուցարարները գետ չեյին ցրվել տները, յերբ նրանց մի սարսափելի լուր հասավ՝ մինիստր Միլյուկովը թերթերում հայտարարել եր, վոր նույսասամեր պետք է շարունակի պատերազմը մինչեւ նրա հաղթական վախճանը: Պատերազմը կլանում եր անհաջի քանակով արկ, կոչիկ, զգեստ: Այդ բոլորից հարստանում եյին կապիտալիստները: Պատերազմը սուսական բուրժուազիային ձեռնորոտ յեր, դաշնակից բուրժուական յերկրները՝ Անդրիան ու Ֆրանսիան ևս պահանջում եյին շարունակել պատերազմը: Յարը անդիմական ու ֆրանսական բուրժուազիայից վոսկով մոռավորագես և միլիարդ ոսւրու փոխառություն եր սոտացել պատերազմ մզելու համար: Անդրիան և Ֆրանսիան ժամանակավոր կառավարությունից պահանջում եյին, վոր նա պատերազմը շարունակի:

Միլյուկովի յերույթը մասսաների մեջ ցասում առաջացրեց: Գետ առավատայան, ցույցի ժամանակ, նրանց խաղաղություն եյին խոստացել, իսկ յերկոյան դարձյալ պատերազմի յեն քըում: Եյին 1917 թվի ապրիլի 20-ին Պետրոգրադում զինվորները, վերցնելով հրացաները, փողոց նեսալցիցին: Հավաքվեց միքանի հանելով հրացաները, վողոց նեսալցիցին: Կորչի միլյուկովը հարցում էր առաջի պատերազմը: «Կորչի! Միլյուկովը»: Հաջորդ որը փողոց դուրս յեկան մը».

բանվորները: Յերկու որ փոթորկալից միտինդներ եցին տեղի ունենալու:

Կառավարությունը վախեցավ: Յերկու մինիստրների՝ Միլյուկովին ու Գուչկովին հեռացրին, իսկ նրանց փոխարեն մացրին մենշևիկներ ու եսերներ: Կապիտալիստները հույս ունեցին, վոր նոր մինիստրները՝ համաձայնողական կուսակցությունների ներկայացնուցիչները, կարող են ավելի լավ խարեւ ժողովրդին, իսկ բուրժուատկան մինիստրները՝ համաձայնողականների թիկունքից, սուածիւ նման պատերազմը կշարունակեն:

Իրոք այդ զիջումը մասսաներին ժամանակավորապես խարեւ: Նրանք վերադարձան աշխատանքի: Բայց շատ բանվորներ ու զինվորներ աստիճանաբար սկսեցին հասկանալ, վոր իրենց խարում են: Նրանք սկսեցին ուշադրությամբ յսել բոլշևիկներին: Գործարաններում ու զնդերում կազմակերպվեցին բոլշևիզման առ բջիջներ: Բոլշևիկների ազգեցությունն ուժեղանալում եր: «Պրավդա»-ն ձեռքից ձեռք եյին խում: Անդին ու Ստալինը բայն ժառաններին բացատրում եյին, վոր կառավարության մեջ մենշևիկների ու եսերների մանելը վոչ մի բան չի փոխել և չի կաշելիների: Կառավարությունը գարձյալ խարում և ժողովրդին և կարունակի կողապատէ պատերազմը:

ԲԱՆՎՈՐ ՅԵՐԻՑԱԱԱԱՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Պետրոգրադի բոլշևիկներին ողնում եր բանվոր յերիտասարդությունը: Պուտիլովյան և այլ գործարանների յերիտասարդ բանվորները բարիկադներում կռվում եյին ցարիզմի զեմ հեղափոխության ժամանակ՝ 1917 թվի փետրվարին: Հեղափոխությունը յերիտասարդությունը տարածում եր «Պրավդյուց» հետո յերիտասարդությունը կազմակերպելու միտինդներ: Այս ողնում եր բոլշևիկներին՝ կազմակերպելու միտինդներ: Հեղափոխության թշնամիներն աշխատում եյին բանվոր յերիտասարդությունը բոլշևիկներից հեռացնել: Նրանք սառմ եյին, տասարդությանը բոլշևիկներից հեռացնել: Նրանք սառմ եյին, վոր յերիտասարդությունը պետք է գրքեր կարգա, կուլտուրա-վոր յերիտասարդությունը զբաղվի, և ամեննեին չպետք է ողնի հայրերին՝ իսկ առավատանքով զբաղվի, պատասխանք և լույս» յերիտասարդական կառավարությունը, վորեկը հրավիրում եյին բանվոր յերիտասարդությունը:

Բայց բանվոր յերիտասարդությունը, բոլշևիկների ողնությամբ, ծանոթ եր եսերումենշևիկներից արարքներին: Ակտիվիստ-

ները ձեռնարկեցին բանվոր յերիտասարդության կազմակերպմանը: 1918 թվի ամառը կազմակերպվեց Բանվոր յերիտասարդության սոցիալիստական միությունը: Այդ միությունը յերիտասարդությանը կոչ եր անում՝ պայքարելու բուրժուազիայի դեմ: Սոցիալիստական միությանը անդամագրվեց Պետրոգրադում ավելի քան 50 հազար բանվոր յերիտասարդությունը: Միությունը գարձավ բոլշևիկների կուսակցության ամենամեծ ձափոր ողնականը: 1918 թվին Բանվոր յերիտասարդության սոցիալիստական միությունն աճեց՝ վերածվելով կոմունիստական յերիտասարդական միության—կոմյերիտմիության:

ԽՈՐՀՈՒԹՅԱՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈԽԱԾԱՐԸ

